ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

- ------ 2024 թվականի №--Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից իրականացված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի գնումների վերաբերյալ Գ-2 հաշվետվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը 2022 թվականի 2-րդ եռամսյակում «Կասկադ Էներգո Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից, «Լույս էներջի» փակ բաժնետիրական ընկերությունից և «Արև Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությունից ձեռք է բերել համապատասխանաբար SP-17-174, SP-17-178 և SP-17-179 ծածկագրերով «Այլ դրսի տեղակայման հենարանացցածողային մեկուսիչ» վերտառությամբ ապրանքներ, որոնց գումարային արժեքը կազմում է շուրջ 143 միլիոն դրամ,
2) ի պատասխան Հանձնաժողովի հարցման՝ Ընկերությունը 2023 թվականի նոյեմբերի 13-ի №Ե-1777-23 գրությամբ հայտնել է, որ 2022 թվականի 2-րդ եռամսյակում «Կասկադ Էներգո Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից, «Լույս էներջի» փակ բաժնետիրական ընկերությունից և «Արև Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությունից ձեռք են բերվել համապատասխանաբար SP-17-174, SP-17-178 և SP-17-179 ծածկագրերով ЛК-70/35 և ЛК120/110 տիպի պոլիմերային մեկուսիչներ՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 40 000 և 50 000 դրամ արժեքներով: Ապրանքների ձեռքբերումն իրականացվել է համաձայն Ընկերության կարիքների

համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կանոնակարգի 12.7-րդ կետի, որը հնարավորություն է տալիս մինչև 50 միլիոն դրամ արժողությամբ ապրանքները ձեռք բերել առանց մրցույթի անցկացման: Ընկերությունը հայտնել է նաև, որ տարբեր մատակարարներից ձեռք բերման պատճառ է հանդիսացել վերջիններիս մոտ անհրաժեշտ քանակների բացակայությունը,

3) Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների (այսուհետ՝ Պահանջներ) 16-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով,

4) Պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովը 2023 թվականի դեկտեմբերի 29-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի №ԳԲ/34.3-Ղ4-2/5043-2023 գրությամբ,

5) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2024 թվականի հունվարի 18-ի №Ե-94-24 և հունվարի 8-ի №Ե-25-24 գրություններով, ըստ էության, հայտնել է, որ հաշվի առնելով Պահանջների 20-րդ կետի 6-րդ ենթակետը՝ գնումը կատարել է մեկ անձից՝ ղեկավարվելով Ընկերության կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կանոնակարգի 12.7-րդ կետով, ինչպես նաև Պահանջների 20-րդ կետի 1-ին ենթակետով, որի համաձայն՝ գնումները կարող են կատարվել մեկ անձից, երբ ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, հրատապությունից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը կարող է հանգեցնել հանրային կազմակերպության կողմից ստանձնած պայմանագրային, օրենքով, կամ այլ իրավական ակտով սահմանված պարտավորությունների խախտման՝ պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել: Ընկերությունը հրատապությունը պայմանավորել է վթարավերականգնողական աշխատանքները սահմանված ժամկետում իրականացնելու հանգամանքով: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ ձեռքբերված ապրանքներից 60 հատը Ընկերությունը օգտագործել է իր ընթացիկ

ու վթարավերականգնողական գործունեության ընթացքում: Ընկերությունը հայտնել է նաև, որ խոսքը գնում է պոլիմերային մեկուսիչների մասին, որոնց արտադրող երկրներ են հանդիսանում Ռուսաստանը և Ուկրաինան, որոնց միջև ծավալված ռազմական գործողությունների արդյունքում վտանգվել է այդ երկրներից ապրանքների մատակարարումը, ուստի՝ Ընկերությունը, նպատակ ունենալով ապահովել 35 կՎ ու 110 կՎ լարման օդային ցանցերի անխափան շահագործումը՝ կատարել է հրատապ գնում՝ նախապես կատարելով շուկայի ուսումնասիրություն,

6) Պահանջների 20-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումները կարող են կատարվել մեկ անձից, երբ ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, հրատապությունից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը կարող է հանգեցնել հանրային կազմակերպության կողմից ստանձնած պայմանագրային, օրենքով, կամ այլ իրավական ակտով սահմանված պարտավորությունների խախտման՝ պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել,

7) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Պահանջների 16-րդ կետի 1-ին ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ դրանցով չնախատեսված հիմքով գնումը մեկ անձից իրականացնելով ու մեկ գնման առարկան բաժանելով առանձին չափաբաժինների՝ այդպիսով խուսափելով մրցակցային ընթացակարգերից, իսկ Ընկերության կողմից ներկայացված հիմնավորումները հիմք չեն Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց չկիրառելու համար: Մասնավորապես, Ընկերությունը մեկ գնման առարկան տարբեր չափաբաժինների բաժանելը պայմանավորել է երեք մատարակարարների մոտ անհրաժեշտ քանակների բացակայությամբ, ինչը, սակայն, Ընկերության կողմից որևէ կերպ չի հիմնավորվել: Ավելին, վարչական վարույթի շրջանակում ներկայացվել են նաև անհատ ձեռնարկատեր Ալիկ Հայրապետյանի և «Ալիք Էներգո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնային առաջարկները, ուստի ակնհայտ է, որ շուկայում բացի «Կասկադ Էներգո Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից, «Լույս էներջի» փակ բաժնետիրական ընկերությունից և «Արև Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությունից ևս գոյություն ունեն այլ մատակարարներ: Ինչ վերաբերում է հրատապության հիմքով

ձեռքբերմանը, ապա հարկ է նշել, որ համաձայն ներկայացված տեղեկատվության՝ ձեռքբերված շուրջ 3000 հատ մեկուսիչից երկու տարվա ընթացքում օգտագործվել է միայն 60 հատը, ուստի՝ տարակուսելի է Ընկերության ներկայացրած հիմնավորումը: Վարչական վարույթի ընթացքում ուսումնասիրվել են նաև ձեռքբերված ապրանքների շուկայական գները: Համացանցում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ նույնիսկ հաշվի առնելով բոլոր վերադիր ծախսերը, Ընկերությունը ЛК-70/35 և ЛК120/110 տիպի պոլիմերային մեկուսիչները ձեռք է բերել ավելի թանկ գնով, սակայն հաշվի առնելով, որ Ընկերության ընթացիկ ու վթարավերականգնողական աշխատանքների ծախսերը ֆիքսված են, թանկ գնով ձեռքբերումը ազդեցություն չի ունեցել սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագնի վրա,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը նախազգուշացնել Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների 16-րդ կետի 1-ին ենթակետի ու 20-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների խախտման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ՇԱՀԻՆՅԱՆ**

ք. Երևան
- ---------- 2024թ.